ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51

_____N_____

«Անի Մեսրոպյան Տիգրանի» Ա/Ձ -ի տնօրեն՝ Ա.Մեսրոպյանին
գործունեության հասցեն՝ Փարաքար համայնք,
գ.Պտղունք, Թամանյան 5,
Էլ. հասցեն՝ Artakkarapetyan928@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ
(Պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի տիկին Մեսրոպյան

Տեղեկացնում ենք, որ 24.07.2025թ. № 05/8/05025-2025 գրությամբ ներկայացվել է «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ » Ա/Ձ-ի և ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի միջև 06.05.2025թ. «ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-4» ծածկագրով կնքված պայմանագրին կից համաձայնագրի նախագիծը, որով առաջարկվել է օրենքով սահմանված ժամկետում կնքել և ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ ներկայացնել համաձայնագրի հաստատված տարբերակը, սակայն այն չի ներկայացվել: Համաձայն պայմանագրի 8.5 և 8.15 կետերի՝ կողմերը պարտավորվում են կնքել համաձայնագիր մատակարարման ժամանակացույցի և վճարման ժամանակացույցի վերաբերյալ: ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի և «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ » Ա/Ձ-ի միջև համաձայնագրի նախագիծը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի 2-րդ մասի համաձայն պետք է կնքվեր 15 աշխատանքային օրվա ընթացքում, որը Ձեր կողմից չի կատարվել: Այնուհետև ևս 2 անգամ ծանուցվել եք ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից, սակայն մինչ օրս չեք կատարել Ձեր պարտականությունը: Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը, հիմք ընդունելով 06.05.2025թ. «ՀՀԱՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/23-4» ծածկագրով կնքված պայմանագրի 8.15 կետը, 2025 թվականի սեպտեմբերի 05-ից ամբողջությամբ և միակողմանի լուծում է վերոնշյալ պայմանագիրը և ընկերության շնորհված 11-րդ չափաբաժինը:

Միաժամանակ տեղեկացնում եմ Ձեզ,որ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի դ) մասի և Ձեր կողմից ներկայացված պայմանագրի ապահովման՝ 94 600 (իննսունչորս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և որակավորման ապահովման՝ 141 900 (հարյուր քառասունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով, տուժանքի համաձայնագրերի 1.6 կետի համաձայն տուժանքի համաձայնագրերը և կից պահանջագրերը կներկայացվեն Ձեր ընկերությանը սպասարկող բանկին, սակայն, եթե Ձեր կողմից 5 բանկային օրվա ընթացքում, վերոգրյալ գումարները վճարվեն Կենտրոնական Գանձապետարանում Լիազոր մարմնի անվամբ բացված հաշվեհամարներին, ապա «ԱՆԻ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ » Ա/Ձ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը ամբողջությամբ և միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Հարգանքով՝

05.09.2025

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ.Գևորգյան

Կատարող՝ ֆինանսական վարչության
գլխավոր մասնագետ՝ Տ.Տոնոյան
Հեռ(0232)32372